

տուածածնի եկեղեցւոյ, ձեռամբ անարժան եւ անարհեստ զրչի Գրիգորի: Արդ՝ որք հանդիպիք սուրբ գրոցս, կարգալով կամ օրինակելով, յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զվերոյ յիշեցեալ ստացող սուրբ գրոցս (խօսակց) Պաղտատարն, եւ զծնողսն իւր ըզհայրն զՄարտիրոսն եւ զմայրն իւր զԿուլիսէրն, եւ զկողակիցն իւր զԽաթունն, եւ զորդիքն իւր զԽաչատուրն, զՆերսէսն, զՅակոբն եւ զՊաղտատարն եւ զգուստր իւր զԹուրքմանտան, եւ զեղբայրն իւր զՏէր Գաբրիէլն, եւ զՊահատուրն եւ զՄելքոն, Մարտիրոսն Կուլիսէր ամհային, տէր Խաչատուրն, Գրիգորն, մեծ պապն տէր Յակոբն, որդին զՅոհան, զտէր Սարգիսն, զտէր Ներսէսն, եղբայրն Աստուածատուր եպիսկոպոսն եւ ըզհայրն զՅոհան քահանայն եւ զնախնիքն իւր զՆերսէսն եւ որդիքն Սարգիս սարկաւազն, Աւետիքն, Կիրակոսն, Զաքարիայն, եւ զՍիմէոն զմեծ Նազաւն, զտէր Ներսէսն որ էր նա յերկրէն Սըսա, եւ ի թոռանցն... Այլ եւ զիս անարժան զծողս Գրիգորն աղաչեմ յիշել ի տէր եւ զծնողքս իմ զհայրն իմ զՊակին եւ զմայրն իմ զԾովիկն... յիշողացդ եւ յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս Աստուած յիւր միւսանգամ զալստեանն:

5.

ՅԱՅՍԱՐԿՈՒՐԲ

ՌՀ = 1621:

ԿԱԶՄ՝ հին արեւելեան, տախտակեայ կաշեպատ, արտաքին երկու երեսներու կողմն վրայ գտնուած եւ ճակատ գտնով: — Նիւթ՝ բուրձ, հաստ եւ ոլորեալ: — Թուիւթ՝ 536 կամ 1072 էջ: — Մեծութիւն՝ 38.5 × 28.5 հրտմ.: — Գիր՝ բոլորգիր, միջին մաքրութեամբ: — Գրութիւն՝ երկսիւնակ, 31.5 × 21 հրտմ.: — ՏՈՂԻՔ՝ 37: — ԼՈՒՍԱՆ՝ ՅԱԶԱՐԳ՝ նկարք, բոյունք, պատկերք, յուշկապարիկք — կը գտնուին ամէն աւուր վկայարանութեանց լուսանցքները: — ԹԻՉԱՍԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԳԻՐԲ եւ սկզբնատուրն, եւ ամէն հատուածոց գլխագիրներն ալ կարմիր մելամ: — ԽՈՐԱՆ՝ միակ, քղ. 3ա, եզերագրաւով: — ԿԻՍԱԽՈՐԱՆ, միակ, քղ. 361բ: ԴԱՍԱՐԿ՝ քղ. 1. 535ա. երկրորդ սիւնակ, քղ. 535բ, քղ. 536, եւ երկու բուրձ ալ վերջը: — ՀԱՆԳԱՄԱՆ՝ շատ լաւ եւ մաքուր պահուած է: — ԽՈՐԱՍԱՐԿ՝ ծանօթութիւնք, կարմիր մելամ: — ՅԻՇԱՍԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ամէն վկայարանութեանց վերջը, եւ քղ. 534: — ԺԱՄԱՆԱԿ ԳՐԶՈՒԹԵԱՆ, ՌՀ = 1621): — ԳՐԻԶ՝ Յովհաննէս երէց: — ՏԵՂԻՔ ԿԵՍԱՐԿ: — ՏԵՂԻՔ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ Յայտարարքս, ոչ պնդաւ ընդարձակ է, որչափ քիւ 4 Յայտարարքս:

Մատենան է՝ Յայտարարքս:

Կարգերն, վկայարանութիւններն եւ այլ պատմութիւնք, ճիշդ այն կարգաւ են, ինչպէս Թ. 3 Յայտարարքս, միայն սա տարբերութեամբ որ առաջին օրն Շիղարայ պատմութեան կը սկսի եւ ապա կ'ընէ Լուսաւորչայ եւ Աթանաղինայ պատմութիւնն, եւն:

ՅԻՇԱՍԱԳՐՈՒԹԻՒՆ՝:

1. Ամէն վկայարանութեանց վերջերը:

«Ողորմի ստացողի գրոցս Յովանէս զրչիս քահանայիս եւ ծնողացն իմ Յովասափ քահանային, Խաթունին, Մարիամին, եւ որդւոցն Դաւթին եւ յԱզնուին, եւ ամենայն:

2. (Գլխաւոր յիշատակարան), թղ. 534բ.:

Ձեռս իմ փրտի ի հոյ զառնա՝. մոխիր փոշի զազախանա՝, գի՛րս յիշատակ առ ձեզ մնա՛յ, թէպէտ խոշոր է զիր սորա՛, արդ ով ընդ որով հմտանա, ով որ կարդա՛ աւետի ի սմա՛. յիշամք առնէք զգծող սորա, զեղիկի Յովանէս գրիչս եմ ձեր ծառա: Զինչ նաւն ի յեղեր ծովին, նա գրիչն ի յետի գրին, ո՛հ ո՛վ չլացած աչկունք. ո՛հ ո՛վ կղացած միջկունք, ո՛հ ո՛վ կրուած ոտկունք, ո՛հ ո՛վ աշխատաւոր ձեռկունք, ահա աղատեցայ, արի եւ փառս տուր Աստուծոյ...:

Փառք... որ տրամադրեաց զմատուցս վերջացեալ զծագրացս եւ տկար ուղոյս Յովանէս գրչի: Արդ՝ շնորհիւ բարեբարին Աստուծոյ, սկսայ, ի ՌԿԲ (= 1613) եւ ողորմութեամբ նորին կատարեցի ի ՌՀ (= 1621) ըզտառս Աստուածաշարմար եւ զանգին մարգարիտս... եւ որ կոչի Յայտարարքս, որ յամենայն աւր սիրով եւ զուարճանալով, եւ աւրինակ բարի լինելով ուրախացուցանէ զայնոսիկ որ Աստուածային սիրովն են զմայլեալ եւ հարստացեալ: Արդ՝ զայս ամենայն բարութիւնս տեսեալ, որ աստ հաւաքեալ կան եւ փառաց սոցա ցանկալեալ եղէ եւ մեղաւոր եւ անարժան սուտանուն Յովանէս երէցս զնայի՛ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. եւ տեսեալ զսուրբ զերեզմանն Քրիստոսի, եւ զանաւրինական տեղիսն եւ լեցի զփափաք տենչեան իմոյ եւ ուրախացեալ, եւ բազում աշխատութեամբ բերեալ զթուղթս անտի եւ ցանկացայ այսմ երանաւէտ բանիս, ի միտ առեալ զբանս որ ասէ երանի որ ունիցի զաւակ ի Սիրով, եւ ընտունեակք իցեն նորա

յերուսաղէմ, եւ ես հոյս եւ մոխիրն անալիտան քարտողար տէր Յովանէսս գրեցի զայս Աստուածամերձ արանց պատմութիւնս զցայդ եւ զցերեկ տգնութեամբ եւ բազում աշխատանաւք գրեցի, խիստ նեղութիւն կրեցի թղթի չգտելոյ, բազում անգամ ի Հալապ, ի Ստամպուլ, մինչեւ ի Սպահանու թուղթ բերել տուի, եւ ապա կատարեցաւ հանց որ մէկ տապաղայն Բ զրամ եղաւ, եւ գրեցի եւ ծաղկեցի, եւ գհաստահիմն ոսկով եւ լաճ վարդով զարդարեցի, եւ զըրի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց տէր Յովասափին, եւ մայրս իմ Խաթունին, եւ կողակցի իմոյ Մարիամին, եւ զեղբայրդոյ առ Աստուած փոխեցեալ որդիկս իմ Դաւթին, եւ Մարգարէին եւ զստերացս իմ Խանապէտ, եւ Ալթունին որ բազում ժամանակաւ մայրն աս Աստուած փոխեալ էր, եւ այլ Ալթուն աղջիկս զիմ պէտս կարեաց լնալով, թէ թուղթս կոկելով, եւ թէ զիշերն զծրագս վառելով, մինչ ի լոյս ի զէմս տգնութեամբ կալով, եւ զմարմնաւոր կերակրիկ հողալով, Աստուած իւր բազում աշխատանացն՝ զերկնից արքայութիւնն պարգեւեցէ, եւ աւրհնէ զիւր մէկ հատիկ զեղբայրդոս որդին զՊալին, որ է ի թվին ՌԿԲ (= 1616) եւ ի յառ Աստուած փոխեալ Դօթի, եւ քրեւոցն Սահապին, եւ Շահանային, եւ իմ եղբայրն Մելքոնին, եւ Գալուստին, եւ Լուծերոյն, եւ քրեւոցս իմ Գոհար, Նոնոնար, եւ Թամարին, եւ հաւր եղբայրն իմ Միրիճանին, եւ կողակցին նորա Փաշային, եւ որդւոյն Մարրկոնին, եւ ամենայն արեան մերձաւորաց կենդանեաց եւ մեռելոց ամէն: Դարձեալ եւ կենդանեաց եւ մեռելոց ամէն: Դարձեալ եւ զփեսայացեալք որդիքս իմ, զտէր Յակոբն, զՍահարն, եւ զթոռներս իմ զՊետրոսն եւ Պաւլոսն եւ զայլ պախիսն: Եւ արդ գրեցաւ սուրբ գիրքս ի թվականիս Հայոց Ռ եւ Հ (= 1621), ի մայրաքաղաքն Կեսարիա որ է Մաթեակ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սրբոյն Բարսղի հայրապետին, եւ սուրբ Մեռսուրբ Սարգսի զաւրաւարին, եւ սուրբ Մեռսուրբ Սարգսի զաւրաւարին, ի հայրապետութեան կեռիոսի զինաւորին, ի հայրապետութեան մերոյ տեառն մեծ բարեւնապետի Գրիգորին որ է պայծառ ջահն Հայաստանեայց ազգիս, եւ ի բռնակալութեան սուլթան օսմանին, ի զառն եւ ի նեղ ժամանակի, որ հարկապահանջութեամբ ազգս տապալի: Արդ ես Յովանէս երէցս աղաչեմ զամենեւեան հողացեալս ի զերեզմանի, որ ոչ զոք ունիմ թէ

աւգնեսցէ ինձ յայսմ տեղւոյ, զի յիշեմ զամենաթաղաւորն զՔրիստոս եւ զահեղ ատեան նորա եւ յոյժ սրտաբեկեալ կամ, բայց արտասուելի աչաւք, եւ հառաչմամբ սրտիւ, զէմս ի ձեզ ապաւինիմ, զի վասն իմ աղաչեցէք զողորմածն Աստուած, զի ողորմեսցի ինձ բազմամեղիս, զի ի ձեռն այլոց աղաչանաց, կարող է Աստուած ողորմել մեղաւորաց, զի եւ զուր առնուք ողորմութիւն յողորմած փրկչին Տեառնէ: Դարձեալ աղաչեմ զձեզ զամենեւեան որ լի բերանով եւ ուղիղ սրտի մտաւք Աստուած ողորմի ասէք խոճա ինձիպահին, որ զթուղթս բերաւ ի Սպահանու որ աւարտեցաւ զիրքս: Եւ միւս այլ Ղիմաթ անուն կին մը զրամ ետուր թղթի գին, Աստուած իւր մեղացն թողութիւն շնորհեսցէ, ամէն:

(Շարունակելի)

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿԵՐԸ — ՄՈՒՐԶԸ ԵՒ ԻՐ ԳԵՐԸ ՀՈՅ ԵՐԸԹՈՑՈՒԹԵԱՆ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հազիւ 48 դարուններ բոլորած, 1902 Մարտ 27ին Թիֆլիսի մէջ աչքերն յաւէտ կը փակէր՝ Հայ Ժողովրդական առաջին Երգիչ՝ Քրիստափոր Մ. Կարա-Մուրգա: Մահը անոր յոգնատանջ բայց արդիւնաւէտ կեանքին վերջ կը դնէր: Հայ Ազգը կը կորսնցնէր իր ժողովրդական երաժշտութեան յառաջնիւթաց առաքեալը, որ իր կեանքն համակ ապրեցաւ ու զոհեց հայ ժողովրդական Երգին, Կոմիտասէն յառաջ:

Ինչպէս ամէն նոր զապաւարարանութեան առաջին մշակները, բախած են միշտ պահպանողական դասակարգերու բուռն ընդդիմութեան, նոյնպէս մեր համեստ երգի մշակը իր հրապարակային գործունէութեան առաջին օրէն՝ մոլեռանդ տղիտութեան մը հետեւանք եղող հալածանքներու ենթարկուեցաւ իր իսկ ժողովուրդէն, որուն մշակութային վերելքին նուիրած էր իր ամբողջ կեանքը (հմտ. «Տարագ» շաբաթաթերթ, 1902 Մարտ 31):

Իրական մեծ հանճարներու յարեւմտական հակադրով՝ անոր վայել փառքը ճիշդ այն

ժամանակ հիւսուեցաւ, երբ ան ընդ միշտ հրաժեշտ կու տար այս ողբալի աշխարհին:

Հայանցիկ ակնարկ մը ժամանակակից թերթերուն (Տարազ, Մուրն, Մշակ, Բագմալիպ, Թատրոն եւայլն) բաւ է համոզելու, թէ ազգը ո՛րքան սրտցաւօրէն յայտնած զարմանումով կը ջանար պատուել իր անիրաւուած զաւակը, հերոսի մը վայելք փառալուք յուղարկաւորութեան մը արժանացնելով «հայ ժողովրդական երգն առաջին անգամ բեմ հանող», «յամառ, տոկուն, մոլեռանդ աշխատող», «անձնուէր դործիչ», «մեծ հայրենասէր», «անգաղարում աշխատող», «յայտնի երաժշտագէտ»... Կարա-Մուրզան:

Եւ յիշուի, Հայ Երաժշտութեան Պատմութեան մէջ Կարա-Մուրզայի դերն ու արժանիքը ոչ միայն մեծ, այլ եւ աննախընթաց է՝ քանի մը դիտէ: Ի՛նքը եղաւ հայ ժողովրդական երգերուն առաջին հաւաքողն ու ձայնագրողը, զանոնք առաջին անգամ քառաձայն ներդաշնակողը, առաջին հայկական քառաձայն երգչախումբ կազմողն ու հրապարակային համերգներ տուողը: Ազգային-ժողովրդական բազմաձայն երգեցողութեան ձաշակը մեր ազգին մէջ արթնցնելու առաջին պատիւը՝ ի՛րն է անվիճելիօրէն: Ուրիշ է արժանիքը մեծ երգահան Տիգրան Զուհանեանի (1836 — 1898), որ նոյն դերը խաղաց հայ բեմական ու դասական երաժշտութեան մէջ՝ Կարա-Մուրզայի առաջին հրապարակային ելոյթէն (1885) քսան տարի յառաջ:

Սակայն Կարա-Մուրզայի չնորհիւ հարթուեցաւ հայ ժողովրդական երգի ու բանահիւսութեան մշակումի այն ճամբան, որուն վրայէն ապա քաղեցին աւելի՛ հաստատ քայլերով՝ Մակար Եկմալեան, Կոմիտաս Վարդապետ, Սպիրիդոն Մելիքեան եւ ուրիշներ:

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Խրիմի Ղարա-Սու-Բաղար քաղաքին մէջ 1854 Յունուար 15ին աշխարհի լոյսը տեսաւ Քրիստափոր Մարգարեան (Կարա-Մուրզա), իրր զաւակը համեստ կարողութեան տէր հայ կաթողիկէ ծնողաց: Բարեպաշտ՝ միաժամանակ գեղարուեստասէր մայրը, քնքուշ ձայնով եւ նուագով (կիթառ), ղեռօրօրոցէն իսկ կը ջանար կրթել իր երեխային երաժշտական խողովութիւնը: Հազիւ 4 — 5

ամեայ մանուկ՝ երբ բակը կամ փողոցը խաղով եւ ընկերներով դրաղած՝ մօրը երգը կամ նուագը լսէր, փութով կը դադարեցնէր սովէն խաղ եւ չափահասի մը գիտակցութեամբ հրճուալիւր կ'ունկնդրէր մօրը քնքուշ մեղեդիին: Նոյնը կ'ընէր երբ պատուհանէ մը դաշնակի ձայն լսէր. իսկոյն մոռնալով խաղ ու ընկեր՝ ահանջ կտրած կը խորասուզուէր նուագի թրթռուն ալիքներուն մէջ:

Դպրոցական նախնական ընթացքը կը սկսի իր ծննդավայրին Մխիթարեան տնէն, ուր միաժամանակ կը հետեւի դաշնակի եւ երգեցողութեան կանոնաւոր դասերու՝ ութը տարեկանին: Եւ ղեռ իրր անչափահաս պատանի՝ իր դասընկերներէն երգչախումբ կազմելով «համերգ»ներ կու տայ դպրոցի անձուկ շրջանակին մէջ: Այս առաջին փորձերու յաջողութենէն խրախուսուած՝ երաժշտասէր պարմանը կ'ուխտէ Հայ եկեղեցական եւ ժողովրդական եղանակներու մէջ ներմուծել քառաձայնը, հակառակ միաձայն երգեցողութեան դարաւոր աւանդութեան ու այն օրէն կը նուիրէր իր կեանքը՝ այդ վսեմ դադափաբական իրագործման:

Դաշնակի եւ տեսական երաժշտութեան առած դասերն անբաւարար համարելով՝ եւ ուսնողուն պատանին կը փափաքէր Բեդերապուրիի երաժշտանոցը մտնել, բայց աչքի ժամանակաւոր հիւանդութիւն մը եւ նաեւ նիւթական ծանր պայմաններ արգելք կը հանդիսանան իր բուռն փափաքին: Նոյնպէս Թէոդոսիայի երաժշտանոցը մտնելու փորձ մը նման եւ այլ պատճառներով կը ձախողի: Այն ժամանակ յայտնի երաժշտագէտներէ բացառիկ դասեր առնելով (Solfège եւ Harmonie) եւ յամառ ինքնաշխատութեամբ կը յաջողի որոշ բարձրութեան մը հասցնել իր երաժշտական հմտութիւնը: Հազիւ 25ամեայ՝ հրապարակ կ'ըլլէ կատարելու իր «առաքելական» գործունէութիւնը հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան ընդարձակ եւ անմշակ ասպարէզին մէջ:

«Հայ գործիչներու շարքին մէջ շատ քիչ մարդ կը գտնուի, որ իր սիրած գաղափարն իրականացնելու համար այսքան տոկունութիւն եւ յարատեւութիւն ցոյց տուած ըլլայ», կը գրէ Կարա — Մուրզայի ժամանակակից բանասէր Առաքել Սարգսյանեան (ՀԱ-1905) ապա կը շարունակէ. «Կարա-Մուրզան ամբողջ Կովկասն ու Խրիմը պատելով հաւաքեց

յերուցան եւ նոյնիսկ խուլ անկիւններ երգուած հայերէն երգերն, մշակեց, ներդաշնակեց, քառաձայնի վերածեց եւ ամէն տեղ տեղական ուժեր վարժեցնելով եւ անոնցմէ ժողովրդական երգեցիկ խմբեր կազմելով, հայ ժողովրդական եւ հայրենասիրական երգն առաջին անգամ բեմ հանեց»:

Մինչեւ 1882 թուականը իր կազմակերպած համերգները նախափորձեր էին պարզապէս՝ անձուկ շրջանակի մէջ: Կարա-Մուրզա չգոհացաւ անշուշտ այսքանով, զի անոր նպատակն էր «քառաձայն երգեցողութիւնը տարածել ամէն տեղ, ուր հայութիւն կար, ուր հայ մարդու սիրտն էր բաբախում»: Այս պատճառով՝ 1882 Սեպտեմբեր 18ին կը թողու իր ծննդավայրը եւ կ'ուղևորի դէպի Կովկաս — Թիֆլիս: Ծանապարհօրդութեան ընթացքին շատեր կը խնդան իր ծրագրին վրայ, ուրիշներ բարի խորհուրդ կու տան՝ ետ կենալ քառաձայն երգեցողութիւնը տարածելու «վտանգաւոր» դադափարէն... սակայն ինք ահանջ չի կախեր նման խորհուրդներու եւ ոչ ալ կը հրապուրուի իրեն առաջարկուած զինուորական նուագախումբի վարիչի պաշտօնէն...: Լսենք իր իսկ խօսքերը այդ մասին.

«Սոխում քաղաքում իմանալով իմ նուագախումբը, ասում էին ինձ որ դա անիրագործելի է. ցաւում էին ինձ վրայ եւ առաջարկում մնալ Սոխումում, զինուորական երաժշտական խմբի կարավարի պաշտօնով...: Ծանօթանալով մի (հայ) քահանայի հետ, նա առաջինների նման իմ կարծիքին հակառակ էր, մանաւանդ եկեղեցական երգի մասին, որ քառաձայն անկարելի էր համարում եւ կրօնական տեսակետից սրբապաշտութիւն ու հայկական ձայնանիշերը եւրոպականից բարձր էր դասում»:

Հասնելով հայաշատ Թիֆլիս քաղաքը՝ չփութ կ'ունենայ հայ մտաւորական ընտրանին հետ, որ լսելով իր ծրագրի եւ ձեռնարկի մասին՝ ջերմօրէն կը քաջալերէ զինքը:

«Մշակ» թերթի խմբագրապետ, նշանաւոր ազգային գործիչ եւ մտաւորական՝ Գրիգոր Արծրունի կ'ըլլայ իր առաջին բարեկամն ու ջերմ խորհրդատուն: Ուրիշ երկու հսկայ դէմքեր մեր արեւելեան գրականութենէն՝ Բաքմի եւ Գալստ-Քաթիպա, զնահատելով Կարա-Մուրզայի երաժշտական տաղանդն ու

եղական դերը՝ ամէն կերպ կը խրախուսեն զինք չկասելու իր առաջադրած նպատակէն: Յաջողութեան մեծ յոյս կը ներշնչէ եւ կը գնահատէ իր ջանքերը՝ հասարակական գործիչ եւ գրագէտ Ծերեմց: Սակայն հակառակ այս մեծ դէմքերու բարոյական օժանդակութեան, Կարա-Մուրզա չի յաջողիր «նոր» ձեռնարկով «փոքրերուն» սիրտը գրաւել՝ ժողովուրդը սիրաշահիլ: Երեք տարի զուր տեղ կ'աշխատի երիտասարդութիւնն ի մի հաւաքել՝ երգչախումբ կազմելու եւ համերգներ տալու նպատակով: Մինչ այդ, իր նիւթական եւ ապրուստը ապահովելու համար ընտանիքներու մէջ դաշնակի առանձնական դասեր կու տայ, իսկ երեկոները Արծրունիի սրահին մէջ թատերական ներկայացումներու միջնաբաներուն նուագող երաժշտախումբին՝ ղեկավարի դերը կը ստանձնէ:

Վերջապէս ժողովուրդի խրաչող դասակարգէն քանի մը «յանդուզ» երիտասարդներ՝ պատրաստակամութիւն կը յայտնեն գործակցելու իբր երգիչ. չուտով կը հետեւին ուրիշներ եւ Կարա-Մուրզա մեծ ուրախութեամբ եւ եռանդով կը սկսի առաջին համերգի պատրաստութեան նախափորձերուն: Մեր մեծ մտաւորականները — երեք տարուան մէջ յաջողած էին մամուլի միջոցաւ եւ բերանացի՝ հասկացողութեան կամուրջ ձգել եւ «ընտելացնել» հասարակ ժողովուրդը՝ մեծ արուեստագէտին:

Դիւրին է երեւակայել թէ «ժողովրդի ամէն խաւերից հաւաքուած», երգեցողութենէ բնաւ գաղափար չունեցող պարման—պարմանուհիները մարդկու համար ինչ նեղութիւններ քաշած եւ համերգութեան ինչ հերոսական պահեր անցուցած ըլլալու է Կարա-Մուրզա՝ իր նախնական փորձերու ժամանակ: Նա ստիպուած էր իւրաքանչիւր երգիչի հետ առանձին գրադիլ, կրթելով ամէն մէկուն ձայնն ու հազազը զատ զատ եւ ապա համադրաբար երգելու վարժեցնել բոլոր միահաղոյն: Հետաքրքրական կը համարուի մէջբերում մը ընելու «Տարազ» շաբաթաթերթէն (1902 Մայիս 5), ուր կը նկարագրուի թէ ինչպէս կը սկսէր համերգատար եւ կորովի երաժիշտը իր նորակազմ երգչախումբերուն նախափորձերը...

— «Ընտրում էր նախ բարակ, յետոյ միջակ եւ ապա հաստ ձայները: Եւ որքան էին ուրախանում սկսնակները, երբ Կարա-Մուր-

զան նրանց ասում էր, թէ դու սօսարանօ ես, իսկ դու կոնտրալտօ, թէեւ կարող ես լինել եւ մէցցօ—սօսարանօ: Միւսի ձայնը գտնում էր դրամատիկ տեւօր: Զորբորդէին գովաբանում էր, խրախուսում եւ գուշակում որ ապագայում սքանչելի լիբիկ բարիտոն է լինելու... Բայց իսկապէս դրանք դեռ ոչ մի որդէ ձայներ չէին: ... Ստեղծել, ոչ չեն ներշնչել պէտք էր դրանց եւ Կարա—Մուրզան նրանց հիպոտոսացնում էր, հաւատ, յոյս ներշնչելով, որ կամքի ուժով, նոյն իսկ առանց ձայն էլ ունենալու կարող են լինել եւ՛ աւնոր եւ՛ սօսարանօ: — Զի անցնում մի քանի օր եւ ժողովրդի ամէն խաւերից հաւաքուած խումբը՝ կանոնաւոր, գտուած, մշակուած եւ ներգաշնակ երգում է»...:

1885 Մարտ 15ի թուականը՝ Կարա—Մուր-
ղայի եւ հայ երաժշտութեան պատմութեան
համար կ'ըլլայ յաղթանակի յիշատակելի օր
մը: Զի այդ օրը Կարա—Մուրղա կու տայ՝
իր փոքրիկ բայց լաւ մարդուած խումբով
Առաջին հրապարակային մեծ համերգը՝
Թիֆլիսի Ազգային (Արծրունի) թատրոնի շէ-
քեղ սրահը, որու բեմի վրայ իւրաքանչիւր
երգիչ ժողովրդական գունագեղ տարազով
գիրք բռնած է: Երբ վարագոյրը կը բացուի,
ներկայ բազմութիւնը աչքի, կաննչի ու սրը-
տի՝ խօսող այս հոգեպարար իրականութենէն
անօրինակ կերպով յափշտակուած, բացա-
ռիկ «ովաօրինոյն»երով կը պանծացնէ վաս-
տակաւոր արուեստագէտը:

Այս առաջին համերգի մասին «Նոր—
Դար» լրագրերը 1885 Մարտ 19ին կը գրէ. —
«Ուրբաթ, Մարտի 15ին տեղի ունեցաւ Պ.
Կարա—Մուրզայի առաջնորդութեամբ առա—
ջին անգամ խմբերգական հանդէսը: Իբրեւ
առաջին փորձ շատ յաջող էր եւ առէն կերպ
պէտք է շնորհակալ լինել Պ. Կարա—Մուր—
զայից, որ ձեռնարկել է այսպիսի դժուար,
բայց շատ գեղեցիկ գործի...: Յոյս ունենք
այդ հանդէսը կրկնուած տեսնելու եւ պէտք
է ասենք, որ ներկայ հասարակութիւնը շատ
գոհ էր հանդէսից: Շատ շատեր պիտի
ցաւեն, որ այդ հանդէսին բացառիկ են
եղելը»:

Հաղիւ Երկու շաբաթ անցած՝ Կարա-
Մուրզա կը կրկնէ առաջին համերգը՝ Ապրիլ
1ին: Բայց զժախտաբար այս անգամ չ'ու-
նենար նախորդին յաջողութիւնը, որուն հա-
մար նոյն օրաթերթը իր 1885 Ապրիլ 3 թուին

մէջ զնահատելով Կարա-Մուրզայի արժանիքը՝ խստօրէն կը դատապարտէ ժողովուրդին տգէտ անտարբերութիւնը։ Աւելորդ չենք համարիր այդ յիշատակութիւնը ամբողջութեամբ յառաջ բերել, ցոյց տալու համար երաժշտադէտին անշահախնդիր հոգին, անօրինակ եռանդն ու աննուաճ կամքը, որով չէր գիտեր կասիլ որեւէ խոչընդոտի առջեւ։

— «Ապրիլ 1ին Երեկոյեան (Թիֆլիսում) տեղի ունեցաւ Պր. Կարա—Մուրզայի խմբ. բերդական հանդէսը: Գործը նոր էր, դժուար եւ գովելի. արժէք ուր Պր. Կարա—Մուրզային քաջալերէին իւր ձեռնարկութեան մէջ, մանաւանդ որ՝ երիտասարդ երաժիշտը գործի սիրոյն համար է աշխատում եւ ոչ իւր գրւպանի օգտին:

«Այս անգամ էլ Պր. Կարա — Մուրզան ցոյց տուաւ իր աշխատութիւնը եւ դործի մէջ արած յառաջդիմութիւնը: Երաժշտութիւնից բան հասկացողը միայն դիտէ թէ ինչ դժուար է նոտային անսովոր երիտասարդներից երգեցիկ խումբ կազմել, որոնք պէտք է եւրոպական երաժշտութեան կարգերին, ձայներին համաձայն երգեն: Երիտասարդներ, որոնք սովոր չեն կուրծքից երգելու, այլ երգում են միշտ կա'մ քթումը կա'մ դըլխումը, որոնց քէ՛ ձայնը եւ քէ՛ ակնցը բնութիւն անմշակ են: Այնուամենայնիւ Պր. Կարա—Մուրզա ցոյց տուաւ որ կարող էր այդ դժուարութիւններին յաղթել եւ պապական մեզ համար լաւ երգեցիկ խումբ պատրաստել, որով եւ կարելի կը լինէր հայկական կոնցերտներ տալ: Բայց ի'նչ անես, որ Կարա—Մուրզայի աշխատութիւնները, րտաքին չքեղութեան համար պատմական փառաւոր հազուատների¹ հոգալը՝ բոլորը ի գուր անցան: Բացի այն՝ որ երիտասարդը ամիսներով անօգուտ եւ իւր գրպանին ֆեախելով աշխատել է, նա վճարում է եւ ներկայացումների կրած ֆեսաը — մօտ 200 բոլբի — իւր գրպանից: Թատրոնի դահլիճը կիսով դատարկ էր. եւ մեր բոլոր բարի ձեռնարկութիւններն էլ դատարկութիւններով են վերջանում»:

Հակառակ այս երկրորդ համերգի ան-
յաջողութեան եւ կրած նիւթական փնասին,

¹ Կարա-Մուրզա սովոր էր իր երգչախումբը միշտ ազգային (պատմական) տարազով կամ վայելուչ համադրվածությամբ հանել:

Կարա—Մուրզա չի յուսարեկիր, կը պատ-
րաստուի երրորդ նուագահանդէսի մը, զոր
կը սարքէ իրը հրաժեշտի համերգ (15 Յու-
նիս 1885) եւ կը մեկնի Բագու՝ ուրիշ հայա-
շատ կենդրոն մը, ուր իր երազներուն յոյսե-
րը կը պսակուին: Հոս՝ երիտասարդ արուես-
տագէտին առաջին հիացողն ու քաջալերը
կ'ըլլայ մեր մեծագոյն դերասան Պետրոս Ա-
ղամեան: Կարա — Մուրզա երկու տարուան
մէջ փայլուն համերգներու շարք մը կու տայ,
գնահատուելով միշտ հայ եւ օտար ընտրա-
նի դասակարգէն: Թիֆլիսի երկրորդ եւ եր-
րորդ համերգներու անյաջողութեան պատ-
ճառը — ինչպէս յետոյ կը յայտնուի — կ'ըլ-
լան՝ «մուժ ու յետադէմ տարրեր, որոնք
ամենաստոր կերպով կը հալածեն զինքը»
(Հմմտ. Թ. Թէրլէմէզեան, Ազգ. Մատ. ՃԼ,
չջ 25):

Բագոււի մէջ բացի իր կազմակերպած նուազահանդէսներէն, որոնք իրեն փոքրիկ հասոյթ մ'ալ կ'ապահովեն, շնորհիւ տեղւոյն Մարդասիրական Ընկերութեան ջանքերուն Ազգային Միջնակարգ Վարժարանի երաժշտութեան դասատուի պաշտօն կը ստանայ։ Իբր այդպիսի, 1887ի ամառնային իր կարճ արձակուրդը օգտագործել ուղեկով կը խորհի անցնիլ Պոլիս, հոն եւս ծանօթացնելու հայ ժողովրդական—քառաձայն երգը։

Պոլիս այդ ժամանակ կ'ապրէր հայ մեծագոյն դասականը՝ երգահան Տիգրան Զուհանեան. ու թէեւ Կարա—Մուրզայէն չառաջ ան ունէր պատրաստ կոթողային գործեր, ինչպէս իր մեծահամբաւ «Արշակ Բ.» (Օլիմպիա) օրերան (1868), «Արիֆ»—opera buffa (1872), «Քեօսէ Քեհեա» (1874) եւ հանրածանօթ ու սիրուած «Կարինէն» (Լէպէպիւնի, 1876) եւ ապա «Զէմբիւէ» (1891), բայց Զուհանեան իր երգերուն եւ խմբերդներուն մէջ ընդգրկած էր եւրոպական դասական երաժշտութեան ոճը, մինչ Կարա—Մուրզա ընտրած էր զուտ ժողովրդական տարրը, զոր քառաձայնի պերճ տարազով ժողովուրդին հրամցնելով, կ'ուզէր անոր ճաշակն արթնցնել իր տոհմային երաժշտութեան թառուն գանձերուն հանդէպ :

13 Յուլիս 1887ին կը հասնի Պոլիս ու կ'ընկանի Վենետիկի Միւլթարեան Հայրերուն Գաղափարի վարժարանը: Պաշտօնական այցելութիւններ կու տայ Ագարեան կաթողիկոսին եւ խորհման չարիկին, որոնք լսելով ա-

նոր առաքելութեան մասին՝ կը խանդավառուին ու կը քաջալերեն զինքը : Հայոց Հայրիկը կ'ըսէ . « Զեք երգերն ալ մեր քարոզի գործը կը տեսնեն , Ժողովրդեան սիրտը կը կակողացնեն . ներդաշնակ երգը ոամիկի վրայ լաւ կ'ազդի » :

Շարաթ մը Պոլիս հանգչելէ ետք կը մեկնին վենետիկ, «Մխիթարեան Մխարանութեան անդամոց հաւաքած ազգային երգերն ու երգանակները ուսումնասիրելու» (Արեւելք, 1887 Յուլիս 18)։ Երկու շարաթ ետք՝ Պոլիս կը վերադառնայ, բայց դժբախտաբար ժամանակ չ'ունենար հոն նուագահանդէս կազմակերպելու, որովհետեւ ստիպուած էր Օգոստոսին՝ Բագու իր պաշտօնին գլուխը գտնուելու։ Հազիւ ժամանակ կը գտնէ քանի մը ազգային երգեր ձայնագրելու ճոխացնելով իր երգադանկը (répertoire)։

Բազու վերադարձին՝ առաջին ու նուի-
րական գործը կ'ըլլայ Սուրբ Պատարագը՝
էջմիածնայ եղանակաւ քառաձայն երգե-
տալ։ Կարճ ժամանակամիջոցի մէջ կը յաջո-
ղի խումբը պատրաստել եւ առաջին քառա-
ձայն Պատարագը ներկայացնել՝ հիացում
առթելով հաւատացեալ հոգիներու։ Բայց
Բազուի տգէտ ու մոլեռանդ առաջնորդ Մես-
րոպ Եպս. Սմբատեան՝ վերջնականապէս
կ'արգիլէ նոյնին կրկնութիւնը օտարոտի եւ
կոտորած համարելով այդ «նորութիւնը»։

Կարա—Մուրզա իր ետանդուն գործու-
նէութիւնը Բագուի մէջ՝ որպէս խմբավար եւ
ղաստիարակ — ուսուցիչ՝ կը շարունակէ
մինչեւ 1889 թուականը, խորհելով նոյնիսկ
երաժշտական դպրոց մը բանալ հոն, որ սա-
կայն չ'իրականանար: Բայց կը յաջողի մը-
նայուն երգչախումբ մը կազմել եւ այդ խումբ-
բով Թիֆլիս, Խրիմ եւ Նոր Նախիջեւան շրջ-
քէտով օտարազան համերգներ կու տայ:

Վերադառնալով Բագու կը ձեռնարկէ հայկական օրերա մը գրելու «Շուշան» անունով (Լիբրետտոյ՝ Ատրպետի)։ Այս գործը անյայտ պատճառներով կը մնայ անտաւարտ։ 1891ին կրկին շրջագայութեան կ'ելլէ հայաշատ գաւառներն ու գիւղերը, նոր երգեր հաւաքելու, դաշնաւորելու եւ համերգներով հասարակութեան հրամցնելու։ Վերջապէս անոր համբաւը կը հասնի Էջմիածին, որուն ձեմարանին տեսուչ՝ Արիստակէս Եպս. Սեդրակեան 1892ին կը հրաւիրէ զինքն որպէս Երաժշտութեան ուսուցիչ։ Տասը տարիէ

ի վեր թափառական երաժիշտը՝ անհուն ու-
րախութեամբ կ'ընդունի այս հրաւերը: Ո՛ր-
քան անկեղծ ու սրտագրաւ են իր արտայայ-
տութիւնները, որ կը գրէ այս առթիւ պա-
տասխան—նամակին մէջ. «Աւելորդ է ա-
սել, թէ որքան ուրախացրեց եւ ոգեւորեց
ինձ այդ առաջարկութիւնը: Մի տասնեակ
տարի ընթացքում եւ ահաւասիկ եւ տասը տա-
րի Կովկասում անընդհատ երազելուց յետոյ,
վերջապէս շնորհիւ Ձեր համակրանաց, ար-
ժանանում եմ հասնել նպատակիս՝ Ծառա-
յել Ազգիս՝ բառին բուն նշանակութեամբ:
Այդ հրաւերով ես արդէն բարոյապէս ան-
սահման վարձատրուած եմ հպարտում»:

Բազում իր բարեկամները, աշակերտնե-
րը եւ երգչախումբի անդամները մեծ յար-
գանքով եւ յուզումով ճամբու կը դնեն իրենց
դաստիարակ — ուսուցիչը, որ նոյնպէս խոր
յուզումով կը պաղատի ու կը յանձնարարէ
շարունակել իր սկսած գործը ու չխզել կա-
պը իր հետ: Ապա երգչախումբը բացօթեայ
կը հնչեցնէ քառաձայն ողջերթի երգը ու շո-
ղեկառք կը շարժի...

Կարա—Մուրզա ապագայի նոր յոյսե-
րով, արուեստագէտի հրավառ սիրով եւ հայ
ուխտաւորի մաքուր հաւատքով ճամբայ
կ'ելլէ գէպի էջմիածին: Այս ճանապարհոր-
դութիւնը նկարագրող իր յուշերը կարգա-
ցողը չի կրնար դադար յուզումն ու հիացումը
ի լուր այն արտայայտութիւններուն՝ ուր կը
ցոյց տրի կրօնասիրական եւ ազգասիրական
րիւրեղեայ մաքուր հոգին եւ խոր անհամա-
քը հանդէպ սրբաւայրերու:

«...Սա էջմիածինն էր... Տեղիցս վեր
կացայ շատ զուարթ, կարծես նոր աշխարհ
եկած լինէի. սիրտս հրճուած էր, սրանից էլ
մեծ երջանկութիւն չէր կարող լինել... սին,
պատ, քար, ծառ, նեղ անցք, սանդուխք,
բոլորն էլ սրբաւայր էին թուում, ծառայ, ան-
ցորդ, շինական, մուրացկան — ով երե-
ւաց, բոլոր այստեղի մարդիկն էլ սուրբեր
էին երեւում... Ծառ էր գրաւել ինձ էջ-
միածինը. չէի ուզում որ այստեղ լինեն մե-
ղաւորներ, ապականուած, կեղտոտ, ստոր
հոգի մարդիկ... Ասում էի ինքս ինձ՝ այս-
տեղ եկողներն էլ պէտք է պատրաստուած
զանք. կենսական հաշիւներ, կոնքներ վեր-
ջացնեն — մաքրեն, թշնամիների հետ հաշ-
տուեն ու այնպէս համարձակուեն մտնել այս
ի սկզբանէ սուրբ տեղը... Կամ՝ չպէտք է

զալ, չպէտք է պղծել այս սրբութիւնը...:
Իսկ ես մտածում էի—Կարո՞ղ եմ արդեօք...
(Տես Ազգ. Մատ. ՃԸ. էջ 31):

Կարա—Մուրզա մեծ եռանդով կը նուր-
բուի իր նոր պաշտօնին, խրախուսուած մա-
նաւանդ Վանականներէն, Ուսուցչական Ժո-
ղովէն եւ ձեմարանի աշակերտներէն դառնա-
լով ընդունելութենէն: Կը ծրագրէ ձեմար-
անի մէջ պատրաստել դպրոցներու համար
հմուտ, ձայնագէտ ուսուցիչներ, հասցնել
կարող խմբավարներ՝ եկեղեցական եւ Ժո-
ղովրդական քառաձայն խմբերգներ վարե-
լու, կազմել միայն երգչախումբ, հրատա-
րակել հայկական նոթաներով դասագրքեր եւ
այլն:

ձեմարանի մէջ առաջին յաջող ձեռնար-
կը կ'ըլլայ իր ներդաշնակած քառաձայն Պա-
տարագի ներկայացումը, զոր կը յաջողի
կարճ ժամանակամիջոցի մէջ սորվեցնել աշա-
կերտութեան, որոնց մէջ էր նաեւ 23ամեայ
Կովիտաս Սարկաւազ (այսպէ՛ս վարդապետ):
Թագէտս — Բարթողիմէոս. առաքելներու
տօնին էջմիածնի կամարներուն տակ առաջին
անգամ ըլլալով կը հնչէ հայկական քառա-
ձայն Պատարագը, 150 հոգինոց երգչախում-
բի կողմէ՝ ղեկավարութեամբ Կարա—Մուր-
զայի: Երեւանէն, Վաղարշապատէն եւ այլ
գիւղերէն Մայր Տաճար հաւաքուած հաւա-
տացեալ հոծ բազմութիւնը՝ երկիւղած բա-
րեպաշտութեամբ ու վերացումով կ'ունկն-
դրէ երկնային երաժշտութիւնը: Տասը տարի
ետք՝ իր աշակերտներէն մին, տակաւին
թարմ ազդեցութեանը տակ այդ յիշատակելի
օրուան, կը գրէ. «Օրուայ, ժամանակի ըս-
քանչեւի նորութիւնը եղաւ, երբ առաջին ան-
գամ Մայր Տաճարի կամարներուն տակ հնչե-
ցեց քառաձայն երգը սուրբ Պատարագին:
Լսեցի՞ք, լսեցի՞ք — այդ էր հարցմունքը բե-
րանից բերան: Հռչակն արդէն Երեւանումն
էր. եւ յաջորդ անգամին եւ այնուհետեւ դեռ
չատ անգամ Երեւան այցելուներ էր ածում
էջմիածին Պատարագի քառաձայն դպրու-
թիւնը լսելու: Տաճարի դմբէթները կարծես
վերանում էին եւ յափշտակուած ունկնդրո-
ղի ոգին հիացման թեւերի վրայ սլանում էր,
սլանում էր բա՛րձր բարձր, երբ քառաձայնը
հնչում էր եւ երգի նուագման հետ լուռ ըն-
դարձացած՝ մնում էր աղօթաւորը»: («Ա-
րեւիկ» 1902, Թ. 4955):

ձեմարանի մէջ երաժշտական նոր կեանք

մը կ'եռեւեփի. Երեւանի բնակիչները կը հը-
րաւերեն Կարա — Մուրզան իր ձեմարանի
խումբով համերգներ տալու: Անխնայ ա-
րուեստագէտը ընդառաջելով եղած հրաւե-
րուն եւ օգտագործելով իր ամառնային
արձակուրդը Երեւան, Աղեֆսանդրապոլիս
եւ Իգդիր քանի մը նուագահանդէսներ կու-
տայ՝ խանդավառ ընդունելութիւն գտնելով:

1893 Սեպտեմբերի նոր դպրոցամուտին
կը դառնայ էջմիածին ձեմարանական դա-
սերն վերսկսելու: Խրիմեան Հայրիկ, որ նոր
էջմիածին եկած ու Կաթողիկոս օծուած էր՝
յատուկէն գոհունակութիւն կը յայտնէ
երաժշտագէտին իր արդիւնաւոր գործունե-
ութեան համար: Կարա—Մուրզա զգացուած
այս արդար գնահատանքէն՝ կը գրէ իր եղբոր.
«Հայրիկը ինձ լաւ ընդունեց եւ երկու ան-
գամ շնորհակալութիւն յայտնեց Պատարագի
արարողութիւնը քառաձայն լսելուց յե-
տոյ»...

Սակայն երկար չի տեւեր այս ուրախ
տրամադրութիւնը: Քանի մը տղէտ ու մոլե-
ռանդ հոգեւորականներ — որոնք յետոյ
Մեծն Կովիտաս Վարդապետի տարաբախտ
կեանքին մէջ ալ տխուր դեր պիտի կատա-
րէին — իրենց գլուխ ունենալով Ազունեան
հայրակոյտս՝ կը յաջողին կեղծ ու պատիւ
խօսքերով բարեմոյն Խրիմեան Հայրիկի
միտքը դարձնել, համոզելով որ Կարա —
Մուրզա եկեղեցւոյ մէջ քառաձայն երգեցո-
ղութիւնը ներմուծելով աստուածահաճոյ
գործ չի կատարեր, որովհետեւ «Քառաձայնը
Աստուծոյ հաճելի չէ... Աստուած մէկ՝ ձայնն
էլ մէկ պէտք է լինի»... Դժբախտաբար՝
անպաշտպան արուեստագէտը անձամբ ճանչ-
ցող ու գնահատող «ամէնուն» Հայրիկը՝ ա-
ռանց մեկնաբանութեան, կարճ ու կտրուկ
կ'արձակէ իր «խորթ» զաւակը ձեմարանի
ուսուցչութեան պաշտօնէն՝ քանդելով անոր
յոյսերու աշխարհը... Եւ դեռ հազիւ քանի մը
օր առաջ անոր գովքը հիւսելէն եւ վեց տա-
րի յառաջ ալ Պոլսոյ մէջ գինքը քաջալերէին
ետք...

Ո՛րքան սրտածմլիկ են «իր գաւառին ան-
արժան համարուող» Հայ երգի Առաքելին
այն տողերը, որ այս անհիմն վտարման առ-
թիւ կը գրէ. «Ափսո՛ս իմ ծրագիր, ափսո՛ս
իմ նպատակ, մտադրութիւն... նրանք ո՞ր-
տեղ պիտի իրագործուին — յայտնի չէ: Այս
րոպէիս գոնէ խորտակուած նաւակի նման

ծփում եմ կատաղի ալիքների մէջ. ո՞ր ա-
փին պիտի մօտենամ արդեօք...:

«Հազիւ սկսել էինք կանոնաւոր քառա-
ձայն երգեցողութեամբ պարապել ձեմարա-
նում, հէնց երկրորդ տարուայ սկզբում ինձ
հեռացրին եւ էլի մտցրին հին արեւելեան
ոնգային ճնշող միաձայն երգեցողութիւնը եւ
անպատակաւարմար դասերը... դրա հա-
մար ասում եմ, արդեօք ո՞րտեղ կ'իրագոր-
ծուի իմ ծրագիրը... մտադիր եմ ի հարկէ
այս տարի գնալ զանազան տեղեր եւ թափա-
ռել ինչպէս բախտը կը բերէ» (Նամակ՝
«Մշակ» թերթի խմբագրութեան 8 Նոյմ.
1893):

Այնուհետեւ Կարա—Մուրզա թէեւ խորա-
պէս ընկճուած, բայց միշտ գիտակից իր կո-
չումին եւ առանց յուսահատելու, նոր հոգ
կ'որոնէ իր առաքելութեան: Ութը տարի շա-
րունակ (1893—1901) կը թափառի քաղաքէ
քաղաք, գիւղէ գիւղ նոր համերգներ կազմա-
կերպելու՝ նո՛ր խումբերով եւ յարաճուն ե-
ռանդով: Իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի
մէջ՝ մէկ—երկու ամիս կը մնար, իր արտա-
կարգ խանդով կ'ոգեւորէր երգիչները եւ
կարճ ժամանակի մէջ անոնցմէ կանոնաւոր
մարզուած երգչախումբ կը հասցնէր:

Առաքելութիւնը սկսած էր արդէն իր
պտուղները տալ: Երեւանի դպրոցներու մէջ
սկսած էին քառաձայն երգեցողութեան փոր-
ձեր կատարուիլ Կարա—Մուրզայի աշա-
կերտներով: Բայց իր աշակերտներն ալ կը
հալածուին. 1894ին՝ Երեւանի հայ Դպրոց-
ներու Ընդհանուր Վերատեսուչ Մեսրոպ քա-
հանայ Գեօրգիան յատուկ շրջաբերականով
կ'արգիլէ քառաձայն երգեցողութիւնը...

Այս արգելքները, հեղանք, սպառնա-
լիք, վտարում պաշտօնէ եւ «այլ կարգի»
(կրօնական) հալածանքներ... եւ նիւթական
թշուառութիւնը մանաւանդ, որուն յաճախ
կը մատնուէր, չկրցան զինք կասեցնել իր ազ-
գասիրական գործունէութեան խօլ ընթաց-
քին մէջ: «Ամբողջ 17 տարի, անխնայ կերպով
յառաջ տարաւ՝ կամաւորապէս յանձն առած
այս տաժանակիր գործը» (ՀԱ. 1905 էջ
139) հայ ժողովրդական երգի փրկութիւնը.
եւ փրկելու համար Հայ երգը՝ զոհեց իր
հանգիստը, նիւթականը, առողջութիւնը եւ
ի վերջոյ կեանքը:

Այդ 17 տարիներու գործունէութեան
շրջանին՝ Կովկասի եւ Ռուսիոյ մէջ՝ այցե-

լած էր մօտ 50 հայաբնակ քաղաք, ուր տուած էր 250 համերգ: Իր համերգներուն մասնակցած են 6,000 երգիչներ, որոնք երգելը իրմէ սորված են: Կազմած էր 90 ժողովրդական երգեցիկ-խումբ, որոնց իւրաքանչիւրը կը բաղկանար 40—150 երկսեռ անձերէ: Հաւաքած եւ մշակած է 320 եւ յօրինած է աւելի քան 65 ժողովրդական երգեր: Իր երգահանդէսներուն մասին գրած են 40-է աւելի հայ, ռուս եւ վրացական թերթեր:

Այս թիւերու լեզուն պերճախօս փաստն է իր վաստակին՝ ի դէին հոգեկան եւ ֆիզիքական տառապանքներու եւ նիւթական փնտռի...: Բայց այն վսեմ դադափարականը եւ պաշտամունքը, որ ունէր հայ ժողովրդական եւ քառաձայն երգին հանդէպ՝ կը թարմացնէին իր մէջ գործելու մղիչ ուժը եւ անսպառ եռանդը:

1901ին Կարա-Մուրզա ընտանեօք Թիֆլիս կը հաստատուի եւ առեւտրական դպրոցի մը մէջ երգեցողութեան ուսուցիչ կը կարգուի: Կարճէն նախագլխով իր մօտալուտ մահը՝ ճրի դաստիարակութեամբ ընդունակ երիտասարդներէ խմբավարներ կը պատրաստէ գաւառներու մէջ հայերէն քառաձայն երգը տարածելու համար:

Ճամբորդութեանց չարաչար յոգնութիւնները, երգչախումբի փորձերու սիրտ-մաշուքները, ընտանեկան հոգեր, հոգեկան տառապանքներ, նիւթական կարօտութիւն... ի վերջոյ տարածած զը սպառնն անոր ֆիզիքական ուժերը եւ Հայ երգի առաջամարտիկ Մշակը՝ սրտի տկարութեան մը հետեւանքով՝ նորագործ գարնան առաւօտ մը զոհը կ'ըլլայ իր վսեմ Գաղափարականին (27 Մարտ 1902) Թիֆլիսի իր բնակարանին մէջ:

Անոր վաղածամ մահուան րօթը կը ցրնցէ ամբողջ Կովկասահայութիւնը եւ ռուս ու վրացի երաժշտասէր հասարակութիւնը: Մշակութային կենդրոններ (Բազու, Պաթում, Շուշի, Ախալցխա, Աղեքսանդրապօլ, Վլատիկավիկազ եւայլն), բարձր արուեստագէտներ ու մտաւորականներ, բարեկամներ աշակերտներ՝ կը փութան բազմաթիւ հեռադիրներով իրենց խոր վիշտը եւ յարկաւոր եւ անճնադրաց ծառայող՝ «քեղամաւոր հասարակական գործիչ» - եւ «անփոխարինելի Կարա-Մուրզային»... (տե՛ս «Մշակ» օրաթերթ, 1902 Ապրիլ 2):

Վաստակարեկ երաժշտագէտին յուզարկաւորութեան արարողութիւնը՝ յաղթական դնացի մը երեւոյթը կը ստանայ: Թիֆլիսի ամբողջ հայութիւնը ոտքի ելած էր «սիրելու իր արուեստագէտ գաւառը» յետ մահու...: Մինչեւ եկեղեցի (Պօղոս-Պետրոս) եւ անկէ դերեզմանոց դադաղը ուսամբարձ կը տարուի երգչախումբի անդամներէ, մինչ դադաղի կափարիչը կը տանին՝ հանգուցեալին աշակերտուհիներէն խմբակ մը: Քահանայ, ուսուցիչ, դերասան, խմբավար, երգիչ, աշուղ եւայլն իրր ժողովուրդի մշակութային առաջնորդ՝ ութը դամբանական կը խօսին: Քսանութեանք մահապսակներ ռուս, վրացի եւ հայ մշակութային հաստատութիւններէ, ընկերութիւններէ եւ անհատներէ կը ծածկեն անոր թարմ հողակոյտը: Իսկ խումբ մը սրտցաւ համակիրներ եւ աշակերտներ անոր չիրմին վրայ կը կանգնեն մարմարեայ չքեղ ու արժանաւայել կոթող մը, վրան մակադրուած՝

Հայ երգեցիկ խմբերի կազմակերպող
Հայ երգը ամենուրեք հեղեցեմ
Քրիստափոր Կարա-Մուրզա 1854—1902

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ՍՏԵՂՈՒԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կարա-Մուրզա իր ստեղծագործական առաջին փորձերը սկսած է 16 տարեկանին: Այդ նախնական առաջին փորձերէն մեզ յայտնի է թէ բան մը մնացած ըլլայ ներկայիս:

Երգահանութեան լուրջ եւ արժէքաւոր շրջանը կը սկսի 28 տարեկանին՝ Թիֆլիս բնակութեան երեք տարիներուն, (1882—1885): Դժբախտաբար իր ժամանակակից կենսագիրները ժլատ են այս մասին ու կը գոհանան ընդհանուր դժերու մէջ տրուած քանի մը յիշատակութիւններով: Աւելի քան քսան աղբիւրներու մեր պրպտումներուն իրր արդիւնք՝ գտանք հետեւեալները, զոր ըստ կամս կը թուարկենք՝ նիւթի արժէքով:

1. «Շուշան»-օրերա, որ դժբախտաբար կիսատ մնացած է:

Սոյն օրերային «Հէյ Բէ՛գ» նախերգանքը, զոր Կարա-Մուրզա յաճախ երգել կու տար իր համերգներուն, այնպիսի ժողովրդականութիւն ստացած է, որ «Բազուի տներում, փողոցներում ամէնքն անխտիր երգում էին...» թէ եւ «Շուշան» ի իրրերտուն (= բնագիրը) զեռ տպագրուած չէր (Հմմտ.

Յովհ. Կարապետեանի. Քրիստ. Կ. Մուրզա. տպ. 1904 Տիֆլիս, էջ 54):

2. «Ով է Երջանիկ» - ցնորական կատակերգութիւն (Comédie fantastique) 3 արարով. բնագիր եւ երաժշտութիւն Կ. - Մուրզայի (1895. Բազու):

3. «Որ վառեցիք ի զգօն հոգիս» - Cantate, երգչախումբի եւ նուագախումբի համար. զոր կը գրէ Բազուի Հայոց Մարգարիտիկան Ընկերութեան» 25ամեայ Յօրէկեանին առթիւ եւ առաջին անգամ կը ներկայացնէ 1889 Մայիս 21ին մեծ ընդունելութիւն դառնելով:

4. Երգախումբի նուագ (Programm Musik) - «Արշակ Բ.» Ողբերգութեան (Խ. Վ. Գալֆայեանի) մի քանի տեսարաններու վրայ:

5. Միջնաբայրային երաժշտութիւն (Intermezzo) - Նուագախումբի համար (մօտ 33 կտոր):

6. Potpourri - Հայկական երգերից դաշնակի համար, միակ գործը՝ որուն տպագրութիւնը տեսած է հեղինակը:

7. Պարերգներ եւ Քայլերգներ դաշնակի համար:

Ասոնցմէ դուրս ունի 65 կտոր ժողովրդական երգերու հեղինակութիւններ՝ քառաձայն, եռաձայն, երկձայն, կամ Solo - ընդհանրապէս դաշնակի ընկերակցութեամբ: Իր առաջին համերգին առթիւ կը գրէ «Հրդեհ», «Գաղթականներ» եւ «Հովուի» խմբերգները: Նոյն տարւոյն ամառը (1885) կը յօրինէ «Բաբէ», «Հնչեցեմ լարք», եւ «Ո՛վ Տէր Աստուած»: 1886ին, իր առաջին համերգին տարեգարձին առթիւ կը գրէ ռուսերէն բնագրով երգ մը «Ով ստեղծող», զոր իրր cantate երգել կու տայ, մեծ ողբերգութիւն ստեղծելով ներկայ հայ, ռուս եւ վրացի ունկընդիրներուն մէջ: Այդ նոյն տարին է որ Սր. Պատարագը (Էմիլիանի եղանակ) քառաձայնի կը վերածէ եւ առաջին անգամ ըլլալով հայ երաժշտութեան պատմութեան մէջ՝ երգել կու տայ, ինքն անձամբ զեկավարելով:

Յիշենք ի վերջոյ մեզի ծանօթ իր հեղինակութիւններէն՝ մինչեւ այսօր մեծ խանդավառութեամբ երգուող «Լէթօլլէ» եւ «Հօղալլօ ջան» պարերգները, եւ նուագ ծանօթ «Ազատն Աստուած», «Քեզի մեռնիմ էջմիածին», «Վիշտ» («Մաւուղ» Ողբերգութեան), «Կեցցէ Շապուհ», «Ով Հայկա-

զունք», «Ահա հրեշտակք» եւ այլն խմբերգները:

1901ին Բազու տուած համերգի մը մէջ կը ներկայացնէ իր մեծ բարեկամ եւ հիացող Գամառ-Քաթիպայի «Հայերս իմօ՛ւ անեմք» բնագրի վրայ յօրինած խանդոտ երգը, որուն ի լուր ծերունի բանաստեղծը խորապէս յուզուած եւ արտասուածքով աչքերով կը գոչէ «- Խաչատուր» (երաժշտին մկրտութեան անունը) հոգիս ցնցեցիր, ինձ երկինք բարձրացրիր, այդ ի՞նչպէս ըրիղմեցար իմ հոգուս խորքերը եւ այնտեղից առողանուած այդ բառերը այս նոտերով կենդանացրիր»:

Իր յօրինած 65 ժողովրդական երգերէն մնացեալներու մասին դժբախտաբար ստոյգ բան մը չենք գիտեր. սակայն կրնանք ենթադրել թէ Հայաստանի կամ Վրաստանի երաժշտագիտական Մատենադարաններու մէջ անկիւնը կամ նոյն իսկ անհատներու մօտ թաքնուած ըլլան եւ խնամոտ ձեռք մը օր մը լոյս ընծայէ զանոնք:

Կարա-Մուրզա բացի այս դուռ երաժշտական հեղինակութիւններէն՝ ունի նաեւ գրական գործեր՝ երաժշտագիտական յօդուածներ, ոտանաւորներ եւ արձակ գրութիւններ հրատարակուած ժամանակակից թերթերու մէջ (Մուրն, Մշակ, Տարագ եւ այլն), որոնց մասին խօսիլ մեր նպատակէն դուրս է:

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ՆԿԱՐԱԳՈՐԾՈՒ ՈՒ ԱՐԺԵՔԸ

Կարա-Մուրզա միջահասակ, մօրուսաւոր, մինչեւ ուսերը հասնող երկար վարսերով, բարձր ճակատով, նրբաքիթ, փոքրիկ վարվուռն աչքերով վայելուչ արտաքին մ'ունէր: Իսկ ներքինով՝ խիստ բարոյականի տէր, երկիւղած հաւատացեալ մըն էր, կրելով մաքուր, աննախանձ եւ անոխակալ հոգի մը, որ գիտէր միշտ օրհնել՝ աւետարանական խրատին համեմատ, իր հալածողներն անգամ:

Այս բնատուր ձիւքերուն առնթեր՝ ունէր հաստատուն նկարագիր մը, որուն ամէնէն էական գիծը գաղափարական ազգաիրութիւնն էր: Իր սիրելի Ազգին ծառայելու վսեմ գաղափարը՝ զինքը գոցեա աննիւթական դարձուցած էր: 1881 Ապրիլ 3ին նամակի մը մէջ կը գրէր իր եղբոր «... Բայց ի՞նչ է փողը, ես նրան այնքան չեմ սիրում, համարեա ապում եմ...»: Ո՛րքան անկեղծ են հայիւ 27 տարուան դադա-

փարապալտ երիտասարդին այս խօսքերը,
զորոնք ապագային ալ իր գործերով փաս-
տեց: Զի մինչեւ իր մահը տուած 250 հա-
մերգներէն նւթական ո՛չ մի չափ չէ՛ ապա-
հոված եւ ո՛չ ալ ակնկալած... ընդհակա-
ռակն յաճախ նւթական ֆնասով կ'ելլէր իր
մեծածախս նուագահանդէսներէն: Իր նպա-
տակն էր ազգային-ժողովրդական երգը սիր-
ցնել նախ Ազգին՝ ապա օտարին, ծանօթա-
ցնելով այսպէս Հայ Ազգը Եւրոպացիներուն:

Այնքա՛ն մոլեռանդ , վճռական ու անյող-
դողդ էր իր ձեռնարկներուն մէջ, որ յառա-
ջագիր նպատակին հասնելու համար ո՛չ իսկ
առողջութեանը կը խնայէր : Լսենք այս կա-
պակցութեամբ Ա. Յարութիւնեանի սրտա-
ռուչ խօսքերը, որ Թիֆլիս հրատարակուող
«Թատրոն» պարբերաթերթին մէջ (1903 էջ
110) կը գրէ .

«Նա գիտէր ամէն ինչ արհամարհել, ամէն հալածանք եւ զրկանք կրել, բայց գործից չպաղել, գործին նուիրուել մի առանձին արտասովոր ողեւորութեամբ, ամբողջ էութեամբ: Նա քանի երկար տարիներ գտնուել է ամենաաննպաստ, ամէն ինչ մեռցնող, յուսահատեցնող հանգամանքների մէջ, բայց չէ ընկճուել, չէ խոնարհուել, մարտնչել է արիարար, համոզմունքով եւ միշտ գլուխ բերել իր փայփայած գործը — մայրենի հայ ժողովրդական երգեր տարածելու խորհրդաւոր գործը:...

«Կարա—Մուրզան՝ որպէս մի առաքեալ՝
չառ անգամ քաղցած, չառ անգամ ծարաւ,
չառ անգամ մերկ թափառում էր Կովկասի
ղանազան մասերում եւ հայի կոշտացած ա-
կանջներին լսելի դարձնում մայրենի երգը,
նրա խոր թախիծը, մորմոքիչ վիշտն ու ցա-
ւը» . . . :

1891-ին Վիեննայի եւ 1892-ին Զիւքալդիյի
երաժշտական եւ Թատերական համալսար-
նային Հանդէսներում կը փափաքէր մաս-
նակցիլ 150 հոգիիոց՝ լաւ մարզուած իր
խումբով, որուն համար նոյնիսկ անպաշտօն
հրաւէր ստացած էր Վիեննայէն եւ յաջողու-
թեան մեծ յոյսեր ունէր։ Պարզապէս նիւ-
թականի պակասէն չի կրնար մեծ ծախքերու
կարօտ այդ ձեռնարկին ընդառաջել։ Այդ առ-
թիւ նամակ մ'ալ կը գրէ արդէն Եւրոպայի
մէջ մեծ հռչակ հանած երգահան Տիգրան
Չուխաճեանի, հրաւիրելով զինքը գործակ-

ցելու իրենն եւ միասին ներկայացնելու հայ երգը Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ: Չուհաճեանն աւամայ կը մերժէ իր առաջարկը՝ նոյնպէս նիւթականի պակասէն... «Թէեւ Ձեր ծրագիրը եւ տեսութիւններն չառ յարմար տեսայ, սակայն անոնց գործադրութիւնն ըստ բաւականին դժուար, դրամի չգոյուրեան պատճառով, ինչպէս Դուք ինքնին այս կէտին մէջ խոստովաներ էիք»...:

Իր աղբիւն՝ Երգա՛վ ծառայելու այս սէ-
րէն, կը ծնանին իր նկարագրի երկրորդ կա-
րեւոր գիծը՝ պողպատեայ կամֆը եւ անոր
կից՝ հրավառ խանդը, որով կը յաջողէր ա-
մէնէն աննպաստ պարագաներուն անգամ,
յաճախ զրկանքներ կրելով, մերթ արհա-
մարհուկելով «որոշ» դասակարգէ մը... բայց
երբե՛ք թուլանալով: Աչքերը յառած ուղիղ
իր Գաղափարականին, կը հմայուէր անով ու
կը մոռնար քաղց, հանգիստ եւ նոյնիսկ ըն-
տանիք: Եւ սիրելով Երգը, զայն կ'ըմբռնէր
— լայն իմաստով — իբրեւ զարգացման ան-
հրաժեշտ տարր եւ կրթութեան կարեւոր
աղբակ: Այս նկատումով ալ իր գործունէու-
թիւնը՝ համեմատելով իր կարճ կեանքին՝
չատ աղբիւնաւոր եղաւ:

Բացի իր կազմակերպած նուազահան-
դէսներէն՝ խմբավարներ կը պատրաստէր,
տաղանդաւոր երգիչներուն մասնաւոր խնամք
կը տանէր, կը խրախուսէր զանոնք եւ կը
դրդէր բարձրագոյն կըթուլեան հետեւե-
լու: Յիշենք միայն Թիֆլիսի առաջին երգե-
ցիկ խումբերուն մէջ յայտնուած երեք ա-
նուններ, որոնք ապա իր չնորհիւ իտալիա-
նի օքսբալի — երգիչ դարձան. Շահլամեան
(Tenor), Վարդիկեան (Tenor) եւ Ամիրջան
(Bariton):

Արուեստագէտի նախանձ չունէր, ընդ-
հակառակն, երբ լսէր որ իր աշակերտներէն
մէկը համերգ տուած եւ յաջողութիւն ար-
ձանագրած է, մանուկի մը անմեղու թեամբ
կը հրճուէր, որ հայ երգը իր կամ ուրիշի մի-
ջոցաւ կը տարածուի... Ան իրական առա-
քեալի մը հոգիով կը խորհէր՝ այսպէս թէ
այնպէս հայ երգը, քառաձայն երգեցողու-
թիւնը կը տարածուի եւ այդ կը գոհացնէր
իւր հոգին եւ անով վարձատրուած կը զգար
ինքզինքը։ Ու հոս է գաղտնիքը որ երբեք
չէր յուսալքուեր, երբ իր համերգներուն հա-
սոյթը հազիւ ծախքերը գոցէր ու շատ

անդամ ալ նիւթական փնաստով ելլէր... իրեն
համար բարոյական շահը գերազատ էր :

Դեռ իր կենդանութեան, չնորհիւ իր յա-
րատել ջանքերուն շատ քաղաքներու մէջ
բաժնատասէրներու խորող խումբեր կազմուե-
ցան, որոնցմէ ոմանք իրենց տաղանդը բե-
րին հայ երգի տարածման գործին եւ ուրիշ-
ներ իրենց նպաստը: Ամէն կողմ գեւուած էր
բարի սերմ, որ պէտք է ապագայում աճէր եւ
ղարգանար. ամէն տեղ ժողովրդականանում
էր» կանոնաւոր երգեցողութեան զաղափա-
ւը... կը գրէ «Մշակ» (1902 Մարտ 30): Օ-
տարներ ալ սկսած էին հետաքրքրութիւն
ցոյց տալ եւ խորապէս գնահատել հայ երգն
ու անոր եռանդուն մշակը: 1901-ի Կովկա-
սեան Յուդահանդէսին Կարա — Մուրզա իր
երգչախումբով մասնակցութեան հրաւէր
ստացած ըլլալով, մեծ համակրութիւն կը
չահի եւ կ'արժանանայ «...Օգոստոսիանո
հիւրերի հաւանութեան եւ Յուդահանդէսի
գնահատող Յանձնաժողովի ղովասանքին»
(«Մշակ», անդ):

Այս տողերը — վերջացնելէ առաջ —
կը յիշենք լոկ անոնց համար, որոնք կարծես
«որոշ» ձգտումով մը, արդիւնաւէտ երա-
ժըշտագէտին կենդանութեան ժամանակ եւ
նաեւ անոր մահէն յետոյ ջանացին ստուեր
ձգել անոր արժանիքներուն վրայ... Իր ե-
րաժշտական կրթութիւնը «ոչ — ակադեմա-
կան» գտնելով: Դժբախտաբար արուեստա-
դէտին բնազդը — ձեռագիր մէկ գործը չու-
նինք մեր տրամադրութեան տակ, որ կարե-
նայինք մեր անձնական դատողութեան պը-
րիսմակէն անցնելով, առարկայական դա-
տաստան մը կազմել: Սակայն այն հմտու-
թիւնը — հոգ չէ թէ ոչ ակադեմական — գոր-
բաժիտը բացառիկ դասերով եւ ինքնաշ-
խատութեամբ ձեռք ձգած էր, լիուլի բաւա-
րար էր զինքն հասցնելու այն նպատակին,
որու կը ձգտէր: Նա չորս տարեկանին երա-
ժըշտութեան բնածին տաղանդ յայտնարե-
լով եւ ութը տարեկանին դաշնակի կանոնա-
ւոր դասերու սկսելով, շարունակած է չուրջ
տասը տարի, հետեւելով միաժամանակ Sol-
fège-ի եւ Harmonie-ի, որոնց ընթացքը ա-
ւարտած է յաջողութեամբ: Այս՝ արդէն բա-
ւարար բարձրութիւն մը կը նկատուի, գոնէ
այնքան, որ զինք քարկոծողներուն քարերը
հոն չհասնին... Զարմանալիօրէն — թէեւ
կարելի է մեկնել — այդ քարկոծողներուն

մէջ կը գտնուին նաեւ Եկմալեան եւ Կոմի-
տաս Վարդապետ :

Մեր կարծիքով — Հայաստանէն եկած ձայնապնակի մի քանի երգերէն դատելով — Կարա-Մուրզա հայ ժողովրդական երգերու մշակումին (harmonisation) համար ընտրած է լոկ homophone ձեւը, փոխան polyphone-ի, որուն հետեւած է Կոմիտաս Վարդապետ: Այս սակայն Կարա-Մուրզայի արժէքին նուազման ո՛չ մի պատճառ է, զի Եւրոպայի մէջ ալ, մասնաւանդ 1750էն առգին եւ սլաւ ժողովուրդներու քով՝ homophone երաժշտութիւնը ի պատուի եղած էր եւ է այսօր ալ: Անուրանալի է Կարա-Մուրզայի խօսուած արդիւնքը, որ շուքի նման հետեւեցաւ իրեն: 1885—1902 իր գործունէութեան շրջանին եւ անկէ վերջ՝ բացէք հայ մամուլը եւ կարդացէք հայ արուեստագէտի մասին եղած հիացման անվերապահ արտայայտութիւնները: Պոլսոյ «Արեւելք» 1902 Ապրիլ 10 թուականով կը գրէ — «Ահա հերքելի եւ քննադատութեան կողմէ բազմիցս նուիրագործուած տաղանդ մը ունէր...» «Մուրն» ամսագիր կը գրէ 1902 Ապրիլ թուին մէջ (էջ 181). — «Նա ունէր մի զարմանալի տաղանդ, կարճ միջոցով երգեցիկ խումբ կազմակերպելու նոյն իսկ հայութիւնից օտարացած վայրերում... այն ինչ որ մինչեւ այն զարմանալի գործիչը անբեւալայելի էր համարուում մեզանում, նրանից յետոյ դառաւ իրագործելի...: Կարող են նրանից տեսականապէս աւելի հմուտ երաժշտագէտներ լինել, պէս աւելի հմուտ երաժշտագէտներ լինել, սակայն նրա մեծութիւնը կայանում է մի մասսայի մէջ հնչական ներդաշնակութեան գաղափարը եւ ժողովրդական երգերի սերը արժարծելու մէջ...: Կարա-Մուրզա հայոց խմբական երգեցողութեան գործում առաջին փառապարհ բացողը՝ ռահվիրան էր»: Ռուսական «Քաղպէք» թերթը 1896 թիւ 70-ի մէջ կը գրէ. «Պէտք է խոստովանել որ ռանձին կասկածանքով մտանք թատրոն, որտեղ սպասում էինք լսել Եւրոպացու հոգեւն քիչ բան խօսող արեւելեան միակերպ մի երաժշտութիւն: Բայց որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ մեր առաջ տեսանք 70 հոգի երեխաներից, պատանիներից, կանանցից եւ տղամարդկանցից կազմած, խիստ ջոկոյութեամբ, լաւ պատրաստուած, նուրբ ձայներով մի կանոնաւոր խումբ: Համերգը իրոքստ եւ երաժշտական fort- եւ

pianon-ն զարմացրին մեզ իրանց հնչումով, նրբութեամբ եւ բազմաթիւ ունկնդիրներին մեծ հրճուանք պատճառեցին բոլոր երգերը, եւ ամէն թիւ մի քանի անգամ կրկնուեցին» (Ռ. Թէրլէմէզեան, Ազգ. Մատ. ՃԸ. էջ 39):

Կարա-Մուրզայի անտեսուած մէկ արժանիքն է նաեւ այն, որ ինք կանխաւ զգալով եւրոպական դասական երաժշտութեան ճաշակը, ջանաց նոյն ճաշակը արթնցնել նաեւ մեր ժողովուրդին մէջ, յատուկ տեղ տալով անոր իր համերգներուն մէջ եւ զանազան յօդուածներով ալ ծանօթացնելով զայն:

Եղբարեակերպ, կը կրկնենք ներկայ Հայաստանի անուանի երաժշտագէտ Մ. Յարութիւնեանի խօսքը, մէջբերում ընելով իր ոտուերէն գրուած «Սորհրդային երկիրներու երաժշտական Մշակոյթը» գրքէն (1957) — «Կարա-Մուրզա բացառիկ կառքեր դեր խաղացած է Հայ երաժշտութեան պատմութեան մէջ, արթնցնելով հետաքրքրութիւն ու սէր դէպի ժողովրդական երգը: Անոր գործունէութիւնը նպաստեց ազգային ինքնագիտակցութեան զարթոյնման, սէր ներշնչելով դէպի Հայ երգը»:

Յարգա՛նք Հայ երգի անձնուէր ուսուս-հորդ Մշակին¹:

Հ. Գ. Է. ՊՈՅՆՆԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն):

11. ԵԿԵՂԵԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1877—1878)

Կը յիշուի իբր միակ Ընկերութիւն երկրայի, 1878ին, Պատրիարքական կոնդակին մէջ (Այս, Կ. Պ. 1878 թ. 76): Ե՞րբ հիմնուած է՝ չ'ըսուիր: Հաւանական կը թուի որ գոնէ 1877ին սկիզբ առած ըլլայ: 1881ին զազրած է եւ Յ. Շաւարշ կ'առաջարկէ «Վերահաստատել եկեղեաց Միութիւն անուն Ընկերութիւնն եւ արգելնքը միմիայն Քրիստոնէանի (ազգայնաց վարժարան) յատկացնել» (Մասիս, 1881 թ. 3079): Երգնկայի Առաջնորդ Դիմաքսեան Սրբազան կը զովէ Շաւարշի առաջարկը եւ անմիջապէս

¹ Դասախօսութիւն Վիեննայի Հայ երիտասարդներուն Գրական երկնայթի մ'առթիւ (14 Մարտ 1959):

բաժանորդութիւն մը բանալով՝ 60 հոգի կ'անդամակցին՝ մէկ բաժինն ըլլալով 40 փարա: Գործ. Ժողովը կ'ընտրուի.

Յ. Շաւարշ

Ա. Քաջբերունի

Հ. Սիւրմէնեան

Ս. Ամատունի

(Մասիս, Անդ.):

12. ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (1878)

Հիմնուած է Պոլիս: Հիմնադիրն է Կ. Ս. Ղազանեան (Մանգուլիէի Էփէիար, 1878 թ. 3760): Հիմնումի թուականն է 1878 Փետրուար—Մարտ (Փուլ, 1878 թ. 1265): Յունիսին արդէն ունի իր Կանոնագիրը եւ Գործադիր Ժողովը, զոր կը կազմեն.

Վ. Ալթունեան

Գ. Սէյիսեան

Ա. Եփրանեան

Մ. Դնպրեան

Յ. Մարկոսեան

Ատենապետ

Ատենադպիր

Գանձապետ

Անդամներ

Անդամներ

13. ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՍԱՆՈՒՀԵԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1879)

Կազմուած է 1879 Յունիս 1ին: Հիմնադիրներն են երկրայի Քրիստոնէան վարժարանի Սանուհները, նպատակ ունենալով. «Ազատիկ աշակերտուիեաց դպրոցական պիտոյքներն հոգալէ զկնի, տարին մի անգամ անպաշտպան մնացող աշակերտուիքը զգեստաւորել եւ թանգարան մի հաստատել Քրիստոնէան վարժարանի մէջ» (Հայրենիք, 1881 թ. 730):

Միութեան Տնօրէն Ժողովը կը կազմեն 1881ին.

Օր. Նեվբիկ Մ. Միքայէլեան Ա. Ատենապետ

Օր. Նոյեմի Վ. Քաջեան Բ. Ատենապետ

Օր. Թադուհի Աշըգեան Ա. Ատենադպիր

Օր. Շահանդուխտ Գունտախեան Բ. Ատենադպիր

Օր. Գայիանէ Ղազանճեան Ա. Հաշուակալ

Օր. Սրբուհի Փափազեան Բ. Հաշուակալ

Օր. Արտաշատ Զ. Դանիէլեան Գանձապետ

Անդամավճարն է տարեկան մէկ դահե-

կան: Անդամութիւնը թիւը բարձրացած էր

1881ին՝ 102ի: 13 բարերարութիւններ Միու-

մաբար, ամէլիք եւ այլն: Միութիւնը 20

աղքատ աշակերտութիւններու դպրոցական

պիտոյքը կը հոգայ եւ զգեստները կը շինէ

(Հայրենիք, Անդ.):

14. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (1879)

1879 Յունիս 23ին «Նորոգ կազմեալ է եւ ունի Գործ. Ժողով. Կիրակի օրերը եփրեմեան մասնաւոր դպրոցը հաւաքուելով՝ դասախօսութիւն կ'ընեն. կը ջանան «Թատրոն մը կառուցանել», որուն համար ատաղձներ կը դնեն. ունին 200 ոսկի (Մասիս, 1879 թ. 2372):

Մ. Փորթուզալեան խոսքով Երգնկա՝ 1879 Նոյեմբերին կը գրէ որ «Թատրական Ընկերութիւն կազմուած է մի քատրոն կառուցուած է» (Մասիս, 1879 թ. 2482): Սխալ է այդ տեղեկութիւնը: Թատրական Ընկերութիւնը չ'ունի Երգնկա 1879ին: Թատրոն կառուցանողն է Ուսումնասիրաց Ընկերութիւնը, ինչպէս կը գրէ «Պարոյր» 1879 Սեպտ. 29ին. «Ուսումնասիրաց Ընկերութիւնը կը ջանայ մինչեւ մէկ ամիս Թատրոնի շինութիւնը աւարտել, որպէսզի սկսի Ազգ. ներկայացումներ տալ» (Մասիս, 1879 թ. 2483): Ընկերութեան անդամները քար եւ աղիւս կը կրեն՝ օր առաջ աւարտելու համար Թատրոնի շինութիւնը (Հայրենիք, 1879 թ. 562):

Ընկերութիւնը կը բանայ Կիրակնօրեայ վարժարան եւ Լճարան (Մասիս, Անդ.):

Յիշատակութիւն չկայ թէ Ուսումնասիրաց Ընկերութիւնը նաեւ Թատրական Ընկերութիւն կոչուի:

15. ՄԻՈՒԹԻՒՆ ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵԱՅ (1880)

Կը հիմնուի 1880 Օգոստոս 30ին: Շաբաթական բաժանորդագրութիւնն է 40 փարա: Մինչեւ Սեպտ. 26 ունեցած է 250 անդամ (Թերմիմանը Էփէիար, 1880 թ. 951, 1015): (Թերմիմանը Էփէիար, 1880 թ. 951, 1015): 1881ի սկիզբը ունէր 1000 բաժանորդ (Մասիս, 1881 թ. 2828): Ընկերութեան զազա-փարը Առաջնորդ՝ Հմայեակ Սրբ. Դիմաքսեանինն է. Պոլսոյ Պատրիարքը քաջա-լերութեան կոնդակ կը գրէ, իսկ Միութիւնը 1880 Նոյեմբերին «սկսած է կանգնել իւր դա-ւառական թանգարանն, որ պիտի հաւաքէ Ազգ. ամէն տեսակ հիւսիքներ եւ գրքեր» (Թերմ. Էփ. 1880 թ. 985):

16. ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (1880)

Պոլսոյ համառուն Ընկերութեան մէկ ճիւղ կը կազմուի Երգնկայի մէջ 1880 Դեկտեմբերին: Ժամանակակից թերթի մը թղթակի-ցը կը պատմէ. «Երեքշաբթի օր Քրիստոնէան վարժարանի մէջ 80էն աւելի պատուաւոր

դերձաստաններէ Հայ կանայք եւ օրիորդք ներկայ եղած էին, նաեւ երկու իտալացի տի-կիններ... ներկայ եղողները բաժանորդա-գրութեան ցանկ մը բանալով՝ ամենքն ալ իրենց անունն նշանակեցին...» (Թերմ. Էփ. 1880 թ. 1015: — Մասիս, 1881 թ. 2835):

17. ՍԱՆՈՒՀ ՄԻՈՒԹԻՒՆ (1880)

Երգնկայի մէջ 1879ին հիմը դրուած է փայլուն ազադայ մ'ունեցող վարժարանի մը, որուն անունն է «Ընկերական վարժարան» (Տէ'ս իր մասին Մասիս, 1881 թ. 2870 եւ Տէ'ս իր մասին Մասիս, 1914 թ. 7): Այդ վար-ձողար, Սեբաստիա 1914 թ. 7): Այդ վար-ձողարի Սանիքը 1880ին կը կազմեն Սանուց Միութիւն անունով Ընկերութիւն մը, նպա-տակ ունենալով «կարեւոր գրեանք թանգա-րան (Գրադարան) հաստատել, Կիրակի օրեր գումարուիլ եւ ուսումնական նիւթոյ վրայ վիճարանել» (Մասիս, 1881 թ. 2872):

Միութեան դրամադուլինն է 25 ոսկի (Անդ.):

18. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1880)

Կազմած են Ընկերական վարժարանի Սանիքն ու ուսուցիչները: Իրենց նպատակն է. 1. Սանիքն եւ Պաշտօնէից մէջ փոխա-դարձ ճշմարիտ մտերմութիւն, անկեղծու-թիւն եւ յարգութիւն հաստատել, ծառայա-կան երկիւղն ու հնազանդութիւնը բառնալով. 2. Աշակերտը ազատութեան ու համարձա-կութեան վարժեցնել. 3. Աշակերտաց վարուց եւ բարուց ուղղութեան համար հարկ եղած միջոցներն խորհել ու գործադրել» (Մասիս, 1881 թ. 2872):

19. ԱԶԳԱՆՆԱՄ ՅԱՆՁՆԱՌՈՂՈՎ (1891)

Կազմուած է 1896էն 5 տարի առաջ եւ ունեցած է հոգը «կարօտ ազգայիններու հա-մար նպաստ հաւաքելու եւ բաշխելու» (Արե-ւիկան Մամուլ. Զմիւռնիա 1896, էջ 329): Ազգատախտամը այդ իր ստանձնած պաշտօ-նը «կատարած է անդիւտ պարտաճանաչու-թեամբ ու յաջողութեամբ», ունենալով գոր-ծող անդամներ. Հայրապետ Գալփայեան եւ Խաչիկ Սահակեան (Անդ. 329—32):

20. ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1900—1907)

Կազմութեան թուականը մեզ անձանօթ է: Սիւրմէնեան (Երգնկա, Գահիրէ 1947 էջ 231) եւս չի կրնար ճշդել: Նա կը գրէ, «Կըր-